

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ

Հորին մօտ
գտնուող կիներ



Written by: Edward Hughes

Illustrated by: Lazarus

Adapted by: Ruth Klassen

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant
funded by: Zareh Seropian & Sons Foundation
special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children


www.M1914.org

©2012 Bible for Children, Inc.


License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.




Յիսուս եւ իր աշակերտները կը ճամբորդէին
Սամարացիներուն հողերուն վրայէն: Անոնք հասան
Սուքար կոչուող քաղաքը:



Նոր մը կար հոն, ուր Սուքարի ժողովուրդը իրենց խմելիք ջուրը կը քաշէր: Յակոբ, Իսրայէլի հայրը, այդ հորը փորած էր երկար ժամանակ առաջ:



Կանուխ կեսօրէ ետք օդը պէտք էր, որ արեւոտ եւ տաք ըլլար: Տարօրինակօրէն, Յիսուս նստաւ հորին մօտ, մինչ աշակերտները Սուքար գացին ուտելիք գնելու:






Յիսուս առանձին
էր, բայց ոչ երկար
ժամանակ: Տիկին
մը, որ Սուքար
կ'ապրէր եկաւ
ջուր քաշելու:

"Ջուր տուր ինձի,
որ խմեմ" ըսաւ
Յիսուս անոր:




Կինը զարմացաւ. "Ինչպէ՞ս դուն որ
հրեայ ես ինձմէ ջուր կը պահանջես,
ես սամարիդան կին մըն
եմ" ըսաւ ան: Այդ օրերուն
հրեաները գործ չունէին
Սամարադանցիներուն
հետ:



Ան աւելի
անակնկալի եկաւ
երբ Յիսուս ըսաւ,
"Եթէ գիտնայիր
ես ով եմ, ինձմէ
կը պահանջէիր
ապրելու ջուրը":





Կինը ըսաւ
Յիսուսի. "Տէր,
դուն բան մը չունիս, որ
հետը քաշես, եւ հորը շատ
խորունկ է: Ուրեմն ուրկէ՞ դուն
կը ստանաս այդ ապրելու ջուրը:
Դուն աւելի մե՞ծ ես քան մեր հայրը,
Յակոբ, որ մեզի այս հորը տուաւ":






"Ով որ այս ջուրեն խմե
նորեն պիտի ծարաւնայ",
ըսաւ Յիսուս կնկան: "Բայց
ով որ խմե այն ջուրը, որ ես
պիտի տամ երբեք պիտի
չծարաւնայ: Այն ջուրը,
որ ես պիտի տամ... իր


մէջ պիտի դառնայ
ջուրի աղբիւր, որ կը
բխի յաւերժական
կեանքէն": "Տէր,
ի՛նձի տուր այդ
ջուրեն..." ըսաւ
կինը:




Յիսուս կնկան ըսաւ, որ երթայ եւ իր ամուսինը
կանչէ. "Ես ամուսին չունիմ", պատասխանեց
կինը. "Դուն հինգ ամուսիններ ունեցած ես",
ըսաւ Յիսուս: "Եւ ան որ հիմա քու հետդ է քու
ամուսինդ չէ":



Կինը անդրադարձաւ, որ Յիսուս մարգարէ է: Ան
փորձեց անոր հետ վիճիլ, որ ուր պետք է պաշտել
Աստուծոյ, Երուսաղէմ կամ սամարիացիներու
սուրբ լեռը: Յիսուս ըսաւ, որ ճիշդ պաշտողները
կը պաշտեն Հայրը հոգիի եւ իրականութեան մէջ:



"Գիտեմ, որ Փրկիչը կու գայ", ըսաւ կինը Յիսուսի:
"Երբ Ան գայ, Ան պիտի ըսէ մեզի ամէն ինչ" "Ես որ
հետդ կը խօսիմ ինքն եմ", ըսաւ Յիսուս: Այդ ատեն
աշակերտները ետ դարձան, կինը սուղ կաւամանը
հոն ձգեց հորին մօտ եւ ետ քաղաք դարձաւ:






"Եկուր տես
մարդ մը, որ
կ'ըսէ ինչ որ
ըրեր եմ", ըսաւ
կինը Սուքար
մարդուն:
"Կրնա՞յ ըլլալ
որ այս է
Քրիստոսը":
Մարդիկը
ձգեցին
քաղաքը, որ
Յիսուսը տեսնէ
իրենց համար:




Մինչ այդ աշակերտները Յիսուսին ըսին, որ ճաշէ:
Բայց Յիսուս պատասխանեց. "Իմ ճաշս ան է, որ
կատարեմ կամքը Անոր որ ինձ ղրկեց եւ իր գործը
ամբողջացնեմ": Իր գործը ժողովուրդը Աստուծոյ
դարձնելն է:





Քանի որ
սամարացիներ
իրեն
հաւատացին
կնկան
պատահածին
համար: Անոնք
առաջարկեցին
Յիսուսին, որ
հետերնին
մնայ եւ ինք
երկու օր
հետերնին
մնաց:





Շատեր ալ
հաւատացին
Յիսուսի
խօսքերուն:
Անոնք ըսին
"... մենք
անձնապէս
լսեցինք եւ
գիտցանք, որ
իրաւ այս է
Քրիստոսը,
աշխարհի
Փրկիչը":



Հորին մօտ գտնուող կինը

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Յովհաննու 4

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Մադմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք գինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերէդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

